

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր  
**Ստեղծողի մոբիլ դպրոց**  
 2017-2018 ուսումնական տարի  
 10-12-րդ դասարաններ  
 Ուսումնական պլան

Ուսումնական դասընթացներ	Շաբաթական	
	X	XI
<b>Ընդհանուր բաղկացուցիչ</b>		
Հայոց լեզու	2	2
Գրականություն	2	2
Մաթեմատիկա և ինֆորմատիկա <sup>1</sup>	2	2
Բնագիտություն և էկոլոգիա	2	2
Պատմություն	2	2
Հասարակագիտություն	2	2
Արվեստ	2	2
Օտար լեզու <sup>2</sup>	4	4
Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ	3	3
Ռազմամարզական ճամբար	5 օր	5 օր
Մասնագիտական կողմնորոշում	1	1
<b>Ընդհանուր պարապմունք</b>		
<b>Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ</b>	8-12	8-12
Սովորողի ընտրությամբ դասընթաց		
Նախասիրությունների զարգացման ակումբ		
Լրացուցիչ ուսուցման դասընթաց (ներ)		
Ընդամենը	30-34	30-34

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. 10-12-րդ դասարան [սահմանված կարգով](#) ընդունվում է հիմնական կրթություն ունեցող համապատասխան դասարանի սովորողը, որ ընդունում է Ծրագիրը, կատարում ընդունելության պահանջները և ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ միասին, [սահմանված կարգով](#), կնքում պայմանագիր ուսումնառության մասին: Ընդունելությունը կատարվում է [«Մուտք կրթահամալիր» ուսումնական ճամբարով](#):

<sup>1</sup> Սովորողն ընտրում է «Մաթեմատիկա և ինֆորմատիկա» շաբաթական 2 կամ 6 ժամանոց դասընթացներից մեկը:

<sup>2</sup> Սովորողն ընտրում է օտար լեզուներից մեկը՝ վրացերեն, թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, անգլերեն:

3. Ընդհանուր բաղկացուցիչով ուսումնական պարապմունքը կազմակերպվում է 20-25 հոգիանոց խմբով: Սովորողի ընտրությամբ դասընթացի պարապմունքը կազմակերպվում է 8-15 հոգիանոց խմբով: Սովորողի նախասիրության զարգացման ակումբը կազմակերպվում է 12-25 հոգիանոց խմբով: Կրթահամալիրի տնօրենի որոշմամբ կարող են գործել ավելի փոքրաքանակ խմբեր՝ կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցների հաշվին:
4. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
5. Սովորողի ուսումնական գործունեությունը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով, որը սահմանված կարգով կազմվում է ուսումնական չորս շրջանների համար՝ շաբաթական 30-36 ժամ՝ կազմված ընդհանուր բաղկացուցիչից, ընտրությամբ դասընթացներից: Սովորողի ընտրությամբ դասընթացների ընտրվում են սույն պարզաբանումների 27-րդ կետում բերված ցանկից:
6. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված [կարգերը](#) ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
7. Ուսուցումը կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության, ուսումնական նախագծերի) [ուսումնական օրացույցով](#): Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը և տոները, ստեղծագործական այլ հավաքները:
8. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին, կազմված է չորս շրջանից՝
  - առաջին՝ 2017թ. օգոստոսի 30-2018թ. հունվարի 8,
  - երկրորդ՝ հունվարի 9-հունվարի 29,
  - երրորդ՝ հունվարի 30-մայիսի 28,
  - չորրորդ՝ մայիսի 29-հունիսի 15:
9. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, ուսումնական-հասարակական նախագծեր:
10. 2018թ. հունվարի 9-ից 26-ը, մայիսի 29-ից հունիսի 8-ը կրթական ծրագիրը, սահմանված կարգով, կազմակերպվում է նախագծային ուսուցման ճամբարում:
11. 2017թ. սեպտեմբերի 4-8-ը, նոյեմբերի 13-17-ը, 2018թ. ապրիլի 2-6-ը, մայիսի 14-18-ը կրթական ծրագիրը կազմակերպվում է նախագծային ուսուցման ստուգատեսով:
12. 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը, 2017թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2018թ. հունվարի 7-ը, մարտի 26-ից ապրիլի 1-ը, հունիսի 18-ից օգոստոսի 29-ը սովորողին տրվում է արձակուրդ: Այդ շրջաններում ուսուցումը, որպես լրացուցիչ կրթություն, կազմակերպվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծով:
13. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Սովորողը դպրոց է գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական նեթթուք-նոթթուք-պլանշետով, տանն ունի համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովվում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
14. Մեդիագրադարանը, դպրոցական գրադարանը, դասավանդողի բլոգը սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովվում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
15. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման, ուսումնական ճամփորդությունների, ճամբարների, ստուգատեսների միջոցով:

16. Ուսումնական պարապմունքները [սահմանված կարգով](#) կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:
17. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագիրն իրականացվում է առկա, [հեռավար](#), տնային ձևերով:
18. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին, նախագծերին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ էլեկտրոնային գրանցում են ստանում:
19. Ուսումնական գործունեության ընթացքում սովորողն ստանում է գիտելիքներ տեղեկույթի, դրա ստացման, մշակման, պահպանման, փոխանցման մասին. ստեղծում է էլեկտրոնային ուսումնական նյութ, ֆիլմ, ռադիոնյութ. սովորում է գնահատել համացանցում ներկայացված տեղեկատվության վստահելիությունը, վարում է իր ուսումնական բլոգը, կիրառում է համացանցում աշխատելու բարոյական նորմերը: Զարգանում են համակարգչային ծրագրերով, համացանցային տարածքներում աշխատելու կարողությունները:
20. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են սահմանված կարգով:
21. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին, արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:
22. Ծրագրի ամենօրյա 15 րոպե տևողությամբ [ընդհանուր պարապմունքը](#)՝ սահմանված կարգով և ծրագրով, սովորողի համար լրացուցիչ կրթական ծրագիր է:
23. Անձնական ուսումնական բլոգի (կայքի) սահմանված կարգով վարումը սովորողի և դասավանդողի համար [պարտադիր ուսումնական աշխատանք է](#):
24. [Կրթահամալիրի, դպրոցի](#) կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի ուսումնական աշխատանք է:
25. [Սահմանված կարգով](#) իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծի բաղկացուցիչն են:
26. Տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար կրթական ծրագիրը [սահմանված կարգով](#) կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով:
27. Սովորողի ընտրությամբ և լրացուցիչ կրթության դասընթացները, ակումբները կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, լաբորատորիաներում, արվեստանոցներում, արհեստանոցներում:

- Սովորողն ընտրում է առաջարկվող ցանկից՝ հայոց լեզվի քերականություն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Ծրագրավորում», աշխարհագրություն, կենսաբանություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, քիմիա, ֆիզիկա, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, գծագրություն-նախագծում, քանդակ, դերասանի վարպետություն, բեմական խոսք, համակարգչային գրաֆիկական ծրագրեր, մուլտիպլիկացիա, մոնտաժ, լուսանկարչություն, օպերատորական գործ, ռեժիսուրա և բեմական գործ, սոֆեջիո, կերպարվեստ և դիզայն, խեցեգործություն, ոսկերչություն, կար և մոդելավորում, գործվածք-գորգ-կարպետագործություն, հասարակական սնունդ, համակարգիչների շահագործում, վարսավիրություն և դիմափարարում, հրատարակչական գործ, պարտեզապուրակային գործ, ատաղձագործություն, երկրագործություն, վայրի բույսերի հավաքում-մշակում, բնագիտական մտքի պատմություն:
- Սովորողը կարող է ընտրել նաև կրթահամալիրի [պատանեկան ակումբներից](#) մեկը՝ «Լեզվաբանի», «Ընթերցողի», «Անգլիախոսի», «Հայրենագետ-էկոլոգ-աշխարհագետի», «Գիտակների», «Ֆիզիկոս-աստղագետի», «TV mskh», «Ռոբոտիքս»,

«Հոգեբանի», «Երգչախումբ», «Երաժշտական լաբորատորիա», «Անիմացիոն լաբորատորիա», «Արվեստագետի», «Լանդշաֆտային դիզայն», «Թատրոն», մարզական, ձևավորել նոր ակումբ:

28. Սովորողի տնային աշխատանքը բաղկացած է նրա ընտրած (անհատական ուսումնական պլանով) դասընթացների առաջադրանքներից, ամենամսյա առարկայական ֆլեշմոբներից, ուսումնական նախագծի աշխատանքից:
29. 12-րդ դասարանում սովորողի անհատական ուսումնական պլանը առաջին շրջանի համար պարտադիր պետք է պարունակի հայոց լեզու՝ 4 ժամ, հայ գրականություն՝ 3 ժամ, մաթեմատիկա՝ 4 ժամ, պատմություն՝ 4 ժամ, օտար լեզու՝ 4 ժամ, Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ՝ 3 ժամ և սովորողի ընտրությամբ, լրացուցիչ ուսուցման դասընթացներ, ակումբներ: Բացառությամբ սովորողի կողմից ընտրված առարկաների, ուսումնական պլանով որոշված մյուս առարկաների և դասընթացների ուսումնասիրությունն ավարտվում է դեկտեմբերի վերջին՝ կիսամյակային (տարեկան) գնահատականով և (կամ) ամփոփիչ ատեստավորմամբ: Սովորողի ընտրությամբ նախնական մասնագիտական ուսուցման պետական որակավորումն իրականացվում է սահմանված կարգով:
30. 12-րդ դասարանի սովորողը ուսումնական տարվա երրորդ շրջանի իր անհատական ուսումնական պլանում ընդգրկում է «Ցտեսություն» ուսումնական նախագիծը, ուսումնասիրվող առնվազն երեք առարկա, որոնց թվում կարող են լինել նախնական մասնագիտական ուսուցման ծրագիր, ուսումնա-արտադրական փորձառնություն, ինքնակրթություն, լրացուցիչ կրթություն:
31. Սովորողի ընտրությամբ նախնական մասնագիտական ուսուցման պետական որակավորումը իրականացվում է [սահմանված կարգով](#):
32. Լրացուցիչ ուսուցման դասընթացներն ուղղված են հայաստանյան, արտասահմանյան բուհի ընդունելության առարկայական նախապատրաստությանը, ներառում են այլ ուսուցում: Լրացուցիչ ուսուցման դասընթացների կազմակերպման համար սովորողի (ծնողի) հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր: Սովորողը լրացուցիչ ուսուցում կարող է ընտրել կրթահամալիրից դուրս:
33. «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացը կազմակերպվում է [սահմանված կարգով](#):
34. «Արվեստ» առարկան կազմակերպվում է երաժշտության, պարի ուսուցման, արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ ուսումնական նախագծերի, ծեսի, տոնի, համերգի, ցուցադրության կազմակերպման ուսումնական նախագծերի միջոցով:
35. «Ֆիզկուլտուրա և առողջ ապրելակերպ» առարկան սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքներն են, մրցումները: Սովորողին առաջարկվող մարզաձևեր են նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, հրաձգություն, ձեռքի գնդակ: Որպես լրացուցիչ ուսուցում՝ սովորողը կարող է ընտրել բազմամարտ, մարզական ակումբի պարապմունքներ: Կրթահամալիրում կամ կրթահամալիրից դուրս որևէ մարզաձևի լրացուցիչ կրթության ծրագրում ընդգրկված սովորողը կարող է կրթահամալիրում մարզական-ակումբային պարապմունքների չմասնակցել: Սովորողը անվտանգ գործունեության հմտություններ ձեռք է բերում բազմամարտի նախագծերի, քայլարշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ:
36. 10-11-րդ դասարաններում «ՆԶՊ և արտակարգ իրավիճակներ» առարկան կազմված է «Առաջին բուժօգնություն», «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ», «Նախագորակոչիկի իրավունքներ և պարտականություններ», «Զինվորական կարգապահություն և զինվորի որոշ հմտություններ» դասընթացներից: «Նախագորակոչիկի իրավունքներ և պարտականություններ» դասընթացը ընդգրկված է 11-րդ դասարանի «Հասարակագիտության» ծրագրում: Մյուս դասընթացները

կազմակերպվում են գործնական եղանակով, ռազմա-մարզական հավաքների, խաղերի, ճամբարների ընթացքում:

37. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և [սահմանված կարգով](#) ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:
38. Կիրառվում են [գնահատման տարրեր ձևեր](#), որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Ըստ ուսումնական շրջանների սովորողի ուսումնական գործունեության՝ սահմանված կարգով կատարվող գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած, իր ուսումնական բլոգում հրապարակած աշխատանքները (այդ թվում հետազոտական-ստեղծագործական-թարգմանական աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծերի, ուսումնական ճամփորդությունների, հայրենագիտական արշավների նյութեր, առաջադրանքների կատարում, լրացուցիչ կրթության նյութեր, ուսումնական նախագծերի, ուսումնական շրջանների հաշվետվություններ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցության նյութեր): Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
39. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները, այդ թվում 12-րդ դասարանցիների լրացուցիչ կրթության, ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում, համերգներում, մրցումներում: